ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՆԱԴԻ ՍԵԼԵԶՆՅՈՎՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ռուսաստանի Դաշնության Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովը՝ իր գլխավորած պատվիրակության անդամների հետ միասին: Պրն. Սելեզնյովին ուղեկցում էին Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ ԱԺ փոխնախագահ Արա Սահակյանը, պաշտոնատար այլ անձինք:

Մեծարգո հյուրերը նախ այցելեցին Մայր Տաճար, ծանոթացան թանգարանի բարձրարժեք ցուցանմուշներին և տեղեկություններ ստացան Ս. Էջմիածնի հիմնադրման, Հայ Եկեղեցու ավանդությունների և ծիսակատարությունների մասին:

Ապա Վեհարանի Ընդունելությունների սրահում Պրն. Սելեզնյովին և նրան ուղեկցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը, ողջունելով Պետական Դումայի նախագահին, ուրախությամբ նշեց, որ իր ընտրությունից ի վեր առաջին անգամն է, որ Ռուսաստանի Պետդումայի նախագահն է այցելում Մայր Աթոռ և շատ նշանակալից է, որ այն հաջորդում է Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքի, ՌԴ Պաշտպանության նախարար գեներալ Գրաչովի այցելություններին: Վեհափառ Հայրապետը խոսեց ռուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի մասին: Նա ընդգծեց, որ Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիները շատ ընդհանրություններ ունեն և տարբերվում են Արևմուտքի Եկեղեցիներից՝ իրենց առավել ժողովրդային լինելու պարագայով և իրենց կարևոր դերն են ունեցել ազգային մշակույթի ձևավորման գործում: «Այսօր Ռուսաստանի և Հայաստանի պետությունները դժվարին և ճակատագրական օրեր են ապրում, - ավելացրեց Նորին Սրբությունը,- և մեր երկու Եկեղեցիները, Աստծո զորությամբ, պետք է աջակցեն, որ այս ժամանակաշրջանից դուրս գանք ծաղկուն, բարգավաճ և դրական արդյունքներով»:

Պրն. Սելեզնյովը շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ վերստին ընդգծեց մեր երկու Եկեղեցիների ազգային էությունը և նշեց, որ այդ առումով դրանք օրինակ են հանդիսանում մյուս Եկեղեցիների համար: Մեծարգո հյուրը ընդգծեց նաև, որ բոլոր այս այցելությունները ավելի են ամրապնդում երկու ժողովուրդների բարեկամական կապերը բոլոր ասպարեզներում:

Զրույցի ընթացքում Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը Պրն. Սելեզնյովին տեղեկություններ հաղորդեց նաև Մայր Աթոռի գործունեության, մասնա-

վորապես Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների մասին:

Հանդիպման ավարտին տեղի ունեցավ նվերների փոխանակություն, որից հետո հյուրերը շրջեցին Վեհարանի սրահներում և ծանոթացան այնտեղ պահված արվեստի նմուշներին:

ԱՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՌԴ Համապետական դաշնային սահմանապահ ծառայության տնօրեն, բանակի գեներալ Անդրեյ Նիկոլաևը՝ իրեն ընկերակցող պատվիրակության հետ, որի կազմում էին ԱՊՀ անդամ երկրների սահմանապահ զորքերի հրամանատարական խորհրդի անդամները: Գեներալ Նիկոլաևին ուղեկցում էր ՀՀ Ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանը:

Վեհարանի Ընդունելությունների սրահում մեծարգո հյուրին և նրա գլխավորած պատվիրակությանն ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպս. Պոզապալյանը: Սրբազան Հայրը իր և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ողջույնի խոսք ուղղեց ներկաներին՝ կարևորելով այն գործունեությունը, որ ծավալել են նրանք. «Մենք և դուք ընդհանուր նպատակներ ունենք. այն է՝ մեր սահմաններում խաղաղ ու անդորր լինի և մեր ժողովուրդները, անկախ նրանց կրոնական պատկանելության, ապրեն եղբայրության և համերաշխության մեջ»:

Պատասխան խոսքում գեներալ Նիկոլաևը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և իր խոր հարգանքն ու ակնածանքն արտահայտեց հայ ժողովրդի հավատքի կենտրոն Ս. Էջմիածնի նկատմամբ: Նա նշեց, որ և՛ հայ, և՛ ռուս ժողովուրդների կյանքում Եկեղեցին իր կարևոր դերն ու նշանակությունն է ունեցել և միշտ կանգնած է եղել պետության կողքին: Ոչ մի ժողովուրդ չէր կարող գոյատևել առանց հավատի, ընդգծեց մեծահարգ հյուրը:

Ջերմ զրույցի ընթացքում հյուրերը համառոտ պատմեցին իրենց ծրագրերի և անելիքների մասին:

Հանդիպման ավարտին փոխանակվեցին հուշանվերներ:

Հանդիպմանը ներկա էր Գերաշնորհ Տ. Անանիա Եպս. Արաբաջյանը:

Վերջում հյուրերը ծանոթացան Մայր Տաճարի, Վեհարանի և Գանձատան սրահներում ամփոփված արվեստի բարձրարժեք նմուշներին:

ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱՆ ԱՑՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 15-ին, երեկոյան ժամը 18.30-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Ուկրաինայի Հանրապետության նախագահ Լեոնիդ Կուչման՝ տիկնոջ և իրեն ընկերակցող պատվիրակության անդամների հետ: Պրն. նախագահին ուղեկցում էին Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց նախարար Վահան Փափազյանը, ԱՊՀ-ի, Եվրամիության և միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական կապերի գծով նախարար Գագիկ Շահբազյանը, Երևանի քաղաքապետ Աշոտ Միրզոյանը, պաշտոնական այլ անձինք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շրջապատված բարձրաստիճան հոգևոր հայրերով, Մայր Աթոռի Միաբանության անդամներով, Հոգևոր Մեմարանի ուսանողությամբ, Լեոնիդ Կուչմային և նրա գլխավորած պատվիրակությանը դիմավորեց Մայր Տաճարի մուտքի մոտ:

Բարի գալուստ մաղթելով մեծարգո հյուրին՝ Նորին Սրբությունը իր ուրախությունն արտահայտեց, որ Ուկրաինայի նախագահին ողջունում է հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում, 1700-ամյա սուրբ Տաճարում:

Բարիգալստյան արարողությունից հետո հանդիսավոր թափորն ուղղվեց դեպի Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի նստավայրը: Այստեղ, Ընդունելությունների սրահում, ծավալվեց ջերմ և աշխույժ զրույց, որի ընթացքում Նորին Սրբությունն ու Ուկրաինայի նախագահը խոսեցին ուկրաինացի և հայ ժողովուրդների բարեկամության, Եկեղեցու հոգևոր և բարոյական ազդեցությանն ու դերին, Ուկրաինայի հայ գաղութին առնչվող հարցերի մասին: Գարեգին Ա Կաթողիկոսը Պրն. Կուչմային իր երախտագիտությունն արտահայտեց այն բարյացակամ վերաբերմունքի համար, որ Ուկրաինայի իշխանությունները տածում են այնտեղի հայազգի բնակչության նկատմամբ: Պրն. Կուչման, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար, հակիրճ ներկայացրեց Ուկրաինայի և Հայաստանի հանրապետությունների համագործակցության հեռանկարները և հույս հայտնեց, որ բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում իր մեծ ավանդը կունենա և Եկեղեցին:

Հանդիպման ավարտին փոխանակվեցին հուշանվերներ: Վերջմում հյուրերը շրջեցին Վեհարանի սրահներում, ծանոթացան այնտեղ պահվող մշակութային արժեքներին:

«ՏԷՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

Մայիսի 20-ին Վեհափառ Հոր օրհնանքն առնելու և Նորին Սրբության ձեռքից իրենց մրցանակները ստանալու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին եկել «Վարդանանք և մեր ազգային հպարտության գիտակցումը» խորագիրը կրող օլիմպիադայի վերջին փուլի հաղթողները, Երևանի միջնակարգ դպրոցների 9 և 10-րդ դասարանցի աշակերտ-աշակերտուհիներ՝ միջոցառման կազմակերպիչների, իրենց ուսուցիչների, ծնողների և հանձնաժողովի անդամների ուղեկցությամբ: Օլիմպիադան, Վարդանանց տոնի շրջանակներում, անց էր կացվել Արարատյան Հայրապետական թեմի անմիջական ջանքերով և հովանավորությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի, Հայաստանի Գրողների միության և Մշակույթի նախարարության աշխատակիցներ:

Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդ Գարեգին Արքեպս. Ներսիսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց մրցույթի մրցանակակիրներին:

Նորին Սրբությունն Գարեգին Ա Կաթողիկոսը ողջունելով բոլոր նրանց, իր հայրապետական խոսքն ուղղեց դպրոցականներին. «Ցուրահատուկ երջանկության զգացումով եմ դիմում ձեզ, սիրելի աշակերտներ, այստեղ, դարերի լեզվով խոսող, ողջ հայության հոգևոր կենտրոնը հանդիսացող պատմական այս վայրում՝ Ս. Էջմիածնում: Դարեր շարունակ այստեղից հույսի ու լույսի զանգն է ղողանջել ի Հայաստան և ի ամենայն աշխարհի: Մարդիկ այցելում են Ս. Էջմիածին, դիտում մեր պատմության քարեղեն վկա ճարտարապետական կոթողները և մտածում են *անցյալի* մասին: Այսօր ես, սիրելի դպրոցականներ, նայում եմ ձեզ և մտածում եմ

ապագայի մասին: Ես համոզված եմ, որ ի դեմս ձեզ, մեր ժողովուրդը իր դարավոր ժառանգությունը ավելի հարստացնելու ընթացքին մեջ է»: Վեհափառ Հայրապետը եզրափակելով իր խոսքը ասաց. «Եթե ճաղկեք երիտասարդ հասակում, վստահ եմ, որ ձեր կյանքի աշնան շրջանում շատ ավելի պտղաբեր կդառնաք: Այս միջոցառումը ազգային տուրքի ձեր յուրահատուկ մասնակցությունն է, որն ուղղված է մեր հայրենիքի շինության, վերականգնման և զարգացման գործին: Սա է մեր հողը, մեր հայրենիքը և մենք տեր պետք է կանգնենք նրան»:

Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց նաև Արարատյան Հայրապետական թեմին՝ այս գեղեցիկ միջոցառումը նախաձեռնելու համար:

Ապա 144-րդ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Վահե Մուղնեցյանը, որն ի դեպ մրցույթի գլխավոր հաղթողն էր, և 136-րդ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Մերի Անդրեասյանը կարդացին մրցույթից դուրս գրված իրենց շարադրությունները, խոսք «Ի խորոց սրտի»՝ ուղղված Վեհափառ Հայրապետին:

Վերջում Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը մրցույթի 15 հաղթողներին հանձնեց Արարատյան Հայրապետական թեմի և տարբեր ստեղծագործական միությունների և միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված մրցանակները և «Պահպանիչ» աղոթքով օրհնեց բոլոր ներկաներին: Վեհափառ Հայարապետը դպրոցականներին նվերներ հանձնեց նաև իր կողմից:

Հրաժեշտից առաջ Նորին Սրբությունն ու բոլոր մասնակիցները, որպես հուշ այս գեղեցիկ հանդիպման, Վեհարանի բակում լուսանկարվեցին:

ՆՈՐԲԵՐՏ ՀԱՅՆՑԵՆ ԱՑՑԵԼԵՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 21-ին, Գերմանիա մեկնելուց առաջ, Գարեգին Ա Կաթողիկոսին հրա-

ժեշտ տալու նպատակով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում իր դիվանագիտական ծառայությունն ավարտած Նորբերտ Հայնցեն՝ տիկնոջ հետ միասին:

Պրն. Հայնցեն իր խորը երախտագիտությունն արտահայտեց այն ջերմ ու բարեկամական վերաբերմունքի համար, որ արժանացել էր Նորին Սրբության կողմից՝ նրա ընտրությունից ի վեր: Վեհափառ Հայրապետը իր շնորհակալանքի

խոսքն ասաց պրն. Հայնցեին և ի դեմս նրա՝ Գերմանիայի պետությանը՝ Հայաստանի զարգացմանը ցուցաբերած զորակցության համար: Նորին Սրբությունը հատուկ շեշտեց եկեղեցական մարզում «Դիակոնիշեն Վերկ» կազմակերպության և գերմանական այլ եկեղեցական կազմակերպությունների՝ Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին բերած նպաստը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև Հայաստանի և ընդհանուր տարածաշրջանի ներկա կացության մասին:

Հանդիպմանը ներկա էր նաև միջազգային լրագրող, գրող Դոկ. Պիտեր Սոլ-Լատուրը:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հունաց Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի պատվիրակները՝ Պատրիարքության խորհրդատու Պրոֆ. Մոյիսիդիսը և Թեսաղոնիկեի Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Պրոֆ. Անգելոլոփլոսը, որոնց ուղեկցում էին Հունաստանի հայ համայնքի Համազգայինի ատենապետ Կարապետ Գալֆայանը, Համազգայինի Վարչության պատասխանատուներ, անդամներ և ուսանողներ:

Վեհարանում հյուրերին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ծնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Պրոֆ. Անգելոլոփլոսը Հունաց Տիեզերական Պատրիարքի, ներկաների և իր անունից ողջույնի խոսք ուղղեց Նորին Սրբությանը և նրան հանձնեց Թեսաղոնիկեի Համալսարանի կողմից հրատարակված շքեղ հատորներ, որոնք ներկայացնում էին Մակեդոնիայի սրբավայրերը: Մեծահարգ հյուրը իր խորին հարգանքն արտահայտեց «Ուղղափառության մեծ սրբավայր» Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ:

Ապա Պրոֆ. Անգելոլոփլոսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց իրենց առաքելության նպատակը: Նա տեղեկացրեց, որ Թեսաղոնիկեի Համալսարանը պատրաստում է երկու հատորով հանգամանալից մի հրատարակություն՝ հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով, որոնցում տեղ պետք է գտնեն ուղղափառ բոլոր սրբավայրերը: Հատորներում մեծ բաժնով կներկայացվի նաև Հայաստանը: Մեծահարգ հյուրը նշեց, որ այս ձեռնարկումը արժանացել է Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի բարձր գնահատանքին և օրհնությանը, և ավելացրեց, որ իրենց այցելության գլխավոր նպատակն էլ հենց Նորին Սրբության օրհնությունն ու քաջալերանքը ստանալն է: Ծրագրի իրագործմանը աջակցում են նաև Գալֆայան ամուսինները: Հատորները ամբողջական լինելու կապակցությամբ նախատեսվում են ուղևորություններ՝ բոլոր ուղղափառ սրբավայրերով:

Նորին Սրբությունն Գարեգին Ա Կաթողիկոսը, ողջունելով հյուրերին, բարձր գնահատեց այդ օրինակելի ձեռնարկումը և իր հայրապետական օրհնանքը տվեց նրանց: Վեհափառ Հայրապետը վստահեցրեց, որ հատորների կազմման գործում կբերի իր անմիջական մասնակցությունը: «Քրիստոնեությունը անցյալով չէ, որ միայն պիտի արժևորվի,- ասաց Նորին Սրբությունը, - այլ նոր իրագործումներով,

նոր աշխատանքներով, վերարթնությամբ և վերարժևորումով: Մեր երկու ժողովուրդները ճակատագրակից են, և ես համոզված եմ, որ Հունաստանի և Հայաստանի պետությունների միջև գործակցությունը պետք է հանդիսանա մեր բարգավաճման խթանիչ ուժի աղբյուրներից մեկը: Այս այցելությունը այդ ուժի ներարկումն է»:

Շարունակելով իր խոսքը Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հունաց Տիեզերական Պատրիարքության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջև երկխոսությունը էլ ավելի սերտանալու միտում ունի: Այս լույսի ներքո, եկող տարվա մայիսին, սպասվում է Բարդուղիմեոս Ա Պատրիարքի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որը Հայ Եկեղեցու պատմության մեջ առաջին դեպքն է:

Ջերմ զրույցի ընթացքում Պրոֆ. Անգելոփիլոսը Նորին Սրբությանը տեղյակ պահեց նաև, որ Սալոնիկ քաղաքը հայտարարվել է 1997 թ. *մշակութային մայրաքաղաք* և այդ կապակցությամբ նախատեսվում է կազմակերպել մի գիտաժողով՝ «Հարավ-Արևելյան Ասիայի և Եվրոպայի Ուղղափառ Աշխարհը՝ անցյալում և ներկայում» խորագրով: Գիտաժողովին մասնակցելու են նաև հայ գիտնականներ, իսկ պատվավոր հրավիրյալների թվում կլինի նաև Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը հյուրերին նվիրեց թե՛ իր հեղինակած և թե՛ Էջմիածնի գանձերն ու ճարտարապետական հուշարձանները ներկայացնող գրքեր:

ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մայիսի 24-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին այցելեց հանրաճանաչ դերասան Արմեն Ջիգարխանյանը՝ Կրոնի գործոց խորհրդի նախագահ Լազար Սուջյանի ուղեկցությամբ:

Ողջունելով պրն. Ջիգարխանյանին Վեհափառ Հայրապետը բարձր գնահատանքի խոսք ուղղեց մեծատաղանդ դերասանին և նշեց, որ հանձինս նրա

և արվեստի մյուս նվիրյալների մեր մշակույթը մնում է իր պատշաճ մակարդակի վրա: Պրն. Ջիգարխանյանը իր երախտագիտությունն արտահայտեց Նորին Սրբությանը ընդունելության համար և պատմեց իր ձեռնարկումների, ծրագրերի և անելիքների մասին:

Զրույցի ընթացքում խոսվեց նաև ժամանակակից հայ կինոյին և, առհասարակ, հայ մշակույթին վերաբերող հիմնախնդիրների շուրջ: Հատուկ ընդգծվեց այն միտքը, որ տնտեսական ներկա դժվարին պայմաններում, երբ մշակույթի պետական հովանավորությունն այնքան էլ իրական չէ, շատ կարևոր է մեր մտավորականների՝ արվեստագետների, գրողների, հոգևորականների համախմբված, անձնազոհ, ներդաշնակ գործունեությունը: Նրանց բոլոր ջանքերը ուղղված պետք է լինեն մեր հասարակության մեջ հոգևոր և բարոյական արժեքների նվազման դեմ պայքարին: Մենք հիմա փորձության ժամանկաշրջան ենք ապրում, ասաց Վեհափառ Հայրապետը, և պետք է զգոն լինենք մեր իսկական արժեքները վերագնահատելու առումով, չխաբվենք արտաքին փայլին, այլ կարողանանք տեսնել իրերի և երևույթների էությունն ու խորքը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մեծատաղանդ դերասանին նվիրեց Ս. Էջմիածնի հուշամեդալ և իր հեղինակած գրքերից:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, դերասան Վալերի Գորկալինը, կինոռեժիսոր Ներսես Հովհաննիսյանը, կինոյի բնագավառի այլ ներկայացուցիչներ:

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՆՎԻՐԱԿԸ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 27-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի Անդրկովկասի նվիրակ Գերապայծառ Տ. Ժան Պոլ արքեպս. Գոբելին՝ ուղեկցությամբ Հուբերտ եպս. Բարբիեի և Հայաստանում Հայ Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Ներսես արքեպս. Տեր-Ներսիսյանի:

Հյուրերը Վեհափառ Հայրապետին փոխանցեցին Սրբազնագույն Քահանայապետի եղբայրական ողջույնները: Զրույցի գլխավոր նյութ հանդիսացավ Հայաստանյայց Առաքելական և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջև փոխհարաբերությունների զարգացման ընթացքին վերաբերող հարցը: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ գործակցությունը պետք է լինի փոխադարձ հարգանքի հիման վրա, քրիստոնեության ընդհանուր շահերի նկատումով և Հայ Եկեղեցու ավանդույթների հանդեպ եղբայրական վերաբերումով:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՅՏԻ (ՍԵՆԱՏԻ) ՆԱԽԱԳԱՀԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 1-ին, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ֆրանսիայի Հանրապետության Ծերակույտի նախագահ Ռենե Մոնորին՝ ընկերակցությամբ մի պատվիրակության, որի կազմում էին սենատոր Ալեն Գուրնակը, Հայաստանի Հանրապետության նախագահի հատուկ հանձնարարությունների դեսպան, աշխարհահռչակ երգիչ Ծառլ Ազնավուրը, Հայաստանում Ֆրանսիայի հյուպատոս Պիեռ Օրտոլին (դեսպանի բացակայության ժամանակ գործերի ընդհանուր վարիչ), Ֆրանսիայի դեսպանատան մշակույթի կցորդ Պատրիկ Տոնապետյանը և պաշտոնատար այլ անձինք: Հարգարժան հյուրին ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Պրն. Մոնորիին և նրան ուղեկցող պատվիրակությանը Մայրավանքի մուտքի մոտ դիմավորեցին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես Արքեպս. Պոզապալյանը, բարձրաստիճան հոգևոր հայրեր և Միաբանության այլ անդամներ: Շահե Արքեպս. Աճեմյանը հանգամանալից բացատրություններ տվեց Մայր Տաճարի, Իջման Սեղանի, Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության մասին:

Վեհարանում Նորին Վսեմություն Ռենե Մոնորիին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մտերմիկ զրույցի ընթացքին Պրն. Մոնորին հատուկ կարևորությամբ ընդգծեց Հայաստանի և Ֆրանսիայի միջև զարգացող հարաբերությունները: Սենատի նախագահը գոհունակությամբ նշեց, որ առիթը ունի անձամբ ծանոթանալու Հայաստանին պատմական այն ժամանակաընթացքում, երբ հայ ժողովուրդը կերտում է իր անկախ պետականությունը:

Վեհափառ Հայրապետը ասաց, որ թեև Ֆրանսիայի և Հայաստանի հարաբերությունները դարերի պատմություն ունեն, բայց պատմություն չեն դարձել:

«Այսօր նոր թափով են զարգանում այդ հարաբերությունները և վստահաբար զարգանալու են նաև ապագայում», ավելացրեց Նորին Սրբությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարգարժան հյուրին ներկայացրեց Ս. Էջմիածնի դերն ու նշանակությունը՝ ոչ միայն հայ ժողովրդի համար, այլ նաև ընդհանուր քրիստոնեության հայեցակետից դիտված: Նորին Սրբությունը խոսեց նաև Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության մասին և հայտնեց, որ մոտ օրերս մեկնելու է Ֆրանսիա և նախագահելու է այն խորհրդակցական ժողովին, որը տեղի է ունենալու հունիսի կեսին՝ հայ և օտար հայագետների մասնակցությամբ, 1700-ամյակի տոնակատարության ծրագրումի շրջագծի մեջ:

Հարգարժան հյուրը բարձր գնահատանքով արտահայտվեց ֆրանսահայ գաղութի կենսունակության մասին և նշեց, որ հայերը ամբողջական մասնակցություն ունեն Ֆրանսիայի ընդհանուր կյանքում:

Տեսակցության ավարտին Վեհափառ Հայրապետը հարգարժան հյուրին նվիրեց «Էջմիածնի գանձերը» շքեղ հատորը և Ս. Էջմիածնի լուսատիպ պատկերը՝ քարի վրա: Պրն. Մոնորին իր հերթին Վեհափառ Հայրապետին նվիրեց Ֆրանսիայի Սենատի մեդալը՝ հատուկ արձանագրությամբ:

Ապա Պրն. Մոնորին, իր շքախմբի հետ միասին, շրջեց Վեհարանի և Գանձատան թանգարաններում, հետաքրքրությամբ դիտեց այնտեղ ամփոփված բարձրաժեք նմուշները և իր հիացումը արտահայտեց հայ ժողովրդի ստեղծագործական ժառանգության մասին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն, Ռուսաստանի գիտական ընկերությունների միության նախագահ պրոֆեսոր Վլադիմիր Կադիշևսկուն և ինստիտուտի փոխտնօրեն, Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիայի և ինժեներական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ալեքսեյ Սիսակյանին՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի ուղեկցությամբ:

Պրն. Կադիշևսկին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար և իր ուրախությունն արտահայտեց հայ ժողովրդի պետականության նվաճման և հոգևոր վերազարթոնքի կապակցությամբ: Պրոֆեսորը պատմեց ինստիտուտի ծավալած գործունեության, այնտեղ կատարված հայտնագործությունների, ձեռք բերված մեծ նվաճումների և ծրագրերի մասին: Նա նշեց, որ ինստիտուտին անդամակցող 18 երկրների մեջ Հայաստանը ունի իր կարևորագույն և հաստատուն տեղը: Ներկայումս 40 հայ երիտասարդ գիտնականներ ինստիտուտի լաբորատորիաներում իրենց հետազոտություններն են կատարում և նաև խորացնում իրենց գիտելիքները: Ինստիտուտը սերտորեն համագործակցում է Երևանի պետական համալսարանի և Ֆիզիկայի ինստի-

տուտի հետ, ինչպես և Շվեյցարիայում գործող նմանատիպ ՍԵՌՆ կենտրոնի հետ: Ի դեպ, Դուբնայի և ՍԵՌՆ-ի հետազոտական կենտրոնները խաղաղության պահպանման գործում տարված աշխատանքների համար ներկայացվել են Նոբելյան մրցանակի: Պրն. Կադիշևսկին Վեհափառ Հայրապետին հանձնեց ինստիտուտի պաշտոնական հրավերը, նրա գործունեությունը ներկայացնող գրքեր և բուկլետներ:

Գարեգին Ա Կաթողիկոսը բարձր գնահատանքի խոսք ուղղեց գիտնականներին և նշեց, որ անմիջական կապ է տեսնում գիտության և կրոնի միջև: Ե՛վ գիտությունը, և՛ Եկեղեցին ծառայում են մարդկությանը: Նորին Սրբությունն ընդգծեց նաև, որ գիտական հիմնարկները և Եկեղեցին պետք է սերտ համագործակցեն, և այդ համագործակցությունը նախ և առաջ ուղղված պետք է լինի մարդկության իսկական արժեքների վերագնահատմանն ու պահպանմանը:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, Կրոնի գործոց նախագահ Ղազար Սուքյանը, համալսարանի պրոֆեսոր Վլադիմիր Պապոյանը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հունիսի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մամլո ասուլիսը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը մամուլի և լրատվական գործակալությունների ներկայացուցիչներին պատմեց Շվեյցարիա և Փարիզ կատարած այցելությունների մասին, ապա անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի վերաբաժանմանը:

Վեհափառ Հայրապետը իր ճամփորդության առաջին մասը (այցը Շվեյցարիա) որակեց՝ էկումենական, միջեկեղեցական հարաբերությունների ասպարեզում որպես առաջընթաց քայլ: Այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ էր ունեցել Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցիների միջօգնության կազմակերպության (EPER, HEKS) ներկայացուցիչների, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպայի Եկեղեցիների Համագումարի ընդհանուր քարտուղարների, Ուղղափառ Եկեղեցիների, Հունաց Տիեզերական Պատրիարքության Շվեյցարիայի ներկայացուցիչների հետ, քննարկել Մայր Աթոռի և հիշյալ կազմակերպությունների միջև ապագա համագործակցությանն առնչվող հարցեր, ինչպես նաև այցելություն էր տվել միջազգային կարմիր խաչի գրասենյակ:

Ճամփորդության երկրորդ մասը ներկայացնում էր Փարիզում 1700-ամյակի Հանձնախմբի Գործադիր մարմնի կողմից հրավիրված խորհրդակցական գիտաժողովը, որի ընթացքում լսվեցին և քննարկվեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության կազմակերպական աշխատանքներին վերաբերող ծրագրեր և առաջարկներ:

Վեհափառ Հայրապետը հանգամանորեն բացատրեց նաև, թե ինչով էր պայմանավորված թեմերի բաժանումը:

Ասուլիսի ընթացքում Վեհափառ Հայրապետը սպառիչ բացատրություններ տվեց լրագրողներին հետաքրքրող հարցերին:

ԱՑՑԵԼՈՒԹՑՈՒՆ ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հունիսի 25-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում Հունգարիայի արտակարգ և լիազոր դեսպան Դյորդ Նանովսկուն և Պանոն Հալմայի Աբբայության աբբահայր, գլխավոր եպիսկոպոս Աստրիկ Վարսեգիին:

Եպիսկոպոս Աստրիկ Վարսեգին Վեհափառ Հայրապետին հանձնեց Պանոն Հալմայի Աբբայության հիմնադրման 1000-ամյակի տոնակատարությանը մասնակցելու պաշտոնական հրավերը, որը կայանալու է Սեպտեմբեր ամսի առաջին կեսին:

Ջերմ զրույցի ընթացքում աբբահայրը Նորին Սրբությանը ներկայացրեց Պանոն Հալմայի գործունեության մասին պատմական մանրամասներ: Աստրիկ եպիսկոպոսը իր հարգանքն ու ակնածանքը արտահայտեց Մայր Աթոռի և հինավուրց հայ մշակույթի նկատմամբ: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև միջեկեղեցական հարաբերությունների և Հունգարիայի 300-ամյա հայ գաղութի գործունեության մասին:

Հանդիպման ավարտին պրն. Նանովսկին Հովհաննես-Պողոս Պապի անունից Վեհափառ Հայրապետին հանձնեց Ոսկե մեդալ: Նորին Սրբությունը շնորհակալությամբ ընդունելով նվերը, հյուրերին իր հերթին նվիրեց Գանձատունը ներկայացնող ալբոմ, երկրաշարժի հուշամեդալներ և իր հեղինակած գրքերից:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 25-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Խորհրդի անդամ ինը գիտնականներ՝ Ֆինանսների փոխնախարար Արմեն Քեշիշյանի ուղեկցությամբ:

Հյուրերին դիմավորեց Մայր Աթոռի դիվանապետ Ներսես Արքեպս. Պոզապալյանը: Սրբազան Հոր ուղեկցությամբ նրանք եղան Մայր Տաճարում և ստացան բացատրություններ Հայ Եկեղեցու արարողությունների և ծիսակարգի մասին:

Այնուհետև բանկի ներկայացուցիչներին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մտերմիկ զրույցի ընթացքում հյուրերի խնդրանքով Վեհափառ Հայրապետը սիրով ներկայացրեց Մայր Աթոռի գործունեությունը, կառուցվածքը, դերը և մասնակցությունը միջազգային եկեղեցական կազմակերպություններին: Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդը ապրում է հոգևոր վերազարթոնքի, վերարժևորման բարդ ժամանակաշրջան: Խոսեց նաև հանրապետության տնտեսական դժվարությունների մասին և այդ կապակցությամբ գնահատանքի և շնորհակալության խոսք ասաց այն բոլոր միջազգային կազմակերպությունների հասցեին, որոնք օգնության ձեռք են մեկնել իր անկախությունը վերակերտող Հայաստանին:

Հանդիպման վերջում հյուրերը Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ շրջեցին Վեհարանի սրահներում և ծանոթացան այնտեղ ներկայացված արվեստի բարձրարժեք նմուշներին:

Հունիսի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց օրերս նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին իր հավատարմագրերը հանձնած Հայաստանի Հանրապետությունում Զամբիայի արտակարգ և լիազոր դեսպան Նչիմունյա Զոն Սիկաուլուն՝ տիկնոջ հետ:

Վեհարանում հյուրին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Զրույցի ընթացքում պրն. դեսպանը ներկայացրեց Զամբիայի կրոնական կացությունը: Ապա Նորին Սրբությունն ու պրն. Սիկաուլուն խոսեցին Հայաստանի ներկա կացության շուրջ: Վեհափառ Հայրապետը ընդգծեց Հայ Եկեղեցու դերն ու մասնակցության կարևորությունը մեր անկախ պետականության կերտման գործին:

Հունիսի 28-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջորդաբար ընդունեց Կոտայքի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզպետներին՝ թեմական առաջնորդների հետ:

Զրույցների ընթացքում քննարկվեցին մարզերում առաջնորդարանների ստեղծմանը, եկեղեցիների վերակառուցմանը և հոգևոր կյանքի վերաշխուժացմանն առնչվող հարցեր: